ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.**

Օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը նախատեսված է Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով: Այսպես, Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման Հավելված 1-ում Արդարադատության նախարարության թիվ 15-րդ նպատակի («Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումների ռազմավարության իրականացում») միջոցառումների թվում է պրոբացիայի ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կարգավիճակի վերանայմանը և պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքների ընդլայնմանը միտված օրենսդրական փոփոխությունների իրականացումը, որի արդյունքում Պրոբացիայի ծառայությունը պետք է գործի որպես պետական ծառայության առանձին տեսակ, բացառվի տարբերակված մոտեցումը միևնույն կարգավիճակն ունեցող ենթակա պետական մարմինների միջև, ստեղծվի անհրաժեշտ նախադրյալներ ծառայությունը մոտիվացված և ձեռնահաս կադրերի համար առավել գրավիչ դարձնելու համար, ընդլայնվեն պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքները, որի շնորհիվ պրոբացիայի ծառայությունը կհամալրվի 100 հաստիքով:

«Պրոբացիայի ծառայության մասին» և հարակից օրենքների ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումներ նախատեսված են նաև Կառավարության 2019թ.-ի նոյեմբերի 28-ի N1717-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությամբ ու միջոցառումների ծրագրով: Նշված ռազմավարության 11-րդ կետով սահմանված ուղղություններից 11.6.2-րդ ենթակետում նախատեսվել է դիտարկել **Պրոբացիայի ծառայության կարգավիճակի փոփոխման և պրոբացիայի ծառայողների սոցիալական**

երաշխիքների համակարգի վերանայման հնարավորությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձագետների կողմից ներկայացված առաջարկները: Հիմք է ընդունվել նաև այն հանգամանքը, որ կարգավիճակի փոփոխությունը և սոցիալական երաշխիքների նոր համակարգի ներդնումը նաև անհրաժեշտ նախադրյալներ կստեղծեն պրոբացիայի համակարգում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման համար:

Նշվածի համատեքստում հարկ է անդրադառնալ նաև **Հանցավորության խնդիրների եվրոպական կոմիտեի (CDPC) կողմից** 2019 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունված «Բանտերի և պրոբացիոն ծառայողների հավաքագրման, ընտրության, կրթության, վերապատրաստման և մասնագիտական զարգացման հետ կապված ուղեցույցին», որի 2-րդ կետը, ի թիվս այլնի, սահմանում է ուղեցույցի հիմնական սկզբունքները (key principles)՝ իրավական կարգավիճակի համատեքստում նախատեսելով, որ բանտային ծառայությունները և պրոբացիոն գործակալությունները գտնվում են պետական մարմինների պատասխանատվության ներքո, և կարգավիճակի տեսանկյունից պետք է **առանձին գործեն զինվորական, ոստիկանական և քննչական ծառայություններից**[1]:

Կարևոր է նաև վկայակոչել **Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների վերաբերյալ» թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականի** (այսուհետ նաև՝ Հանձնարարական) 18-րդ կետը, որի համաձայն՝ պրոբացիոն գործակալությունների կառուցվածքը, կարգավիճակը և միջոցները պետք է համապատասխանեն նրանց վերապահված խնդիրների և պարտականությունների ծավալին և պետք է արտացոլեն նրանց կատարած պետական ծառայության կարևորությանը: Նույն հանձնարարականի 21-րդ կետով սահմանվում է, որ պրոբացիոն գործակալությունները պետք է իրենց գործունեությունը ծավալեն այնպես, որ վաստակեն արդարադատության այլ գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության հարգանքը պրոբացիոն անձնակազմի կարգավիճակի և կատարած աշխատանքի նկատմամբ: **Իրավասու մարմինները պետք է ձգտեն նպաստել այդ նպատակի իրագործմանը՝ տրամադրելով պատշաճ միջոցներ, իրականացնելով նպատակաուղղված ընտրություն և հավաքագրում, ապահովելով անձնակազմի պատշաճ վարձատրություն և իրականացնելով լավ կառավարում:**

[1] Տե՛ս Guidelines regarding recruitment, selection, education, training and professional development of prison and probation staff, point 2 (key principles), https://www.cep-probation.org/wp-content/uploads/2018/10/Guidelines-regarding-recruitment-selection-education-training-and-professional-development-of-prison-and-probation-staff.pdf (06.02.2023թ. դրությամբ):

Հանձնարարականի 33-րդ կետի համաձայն՝ անձնակազմի վարձատրությունը, արտոնությունները և աշխատանքային պայմանները պետք է արտացոլեն նրանց մասնագիտական հեղինակությունը և պետք է համապատասխանեն նրանց աշխատանքի պահանջկոտ բնույթին՝ պատշաճ անձնակազմ ներգրավելու և պահելու նպատակով[2]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախատեսվող օրենսդրական փոփոխությունների նպատակն է սահմանել Պրոբացիայի ծառայությունը որպես առանձին պետական ծառայության տեսակ՝ միաժամանակ նախատեսելով ծառայության բնականոն զարգացումն ու գործունեության արդյունավետությունը, ծառայության գրավչությունն ապահովելուն միտված սոցիալական երաշխիքներ:

Պրոբացիայի ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի, նախատեսման անհրաժեշտության համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև **միջազգային փորձի վերլուծությանը**:

Այսպես, **Լատվիայի** պրոբացիայի ծառայության մասին օրենքը ընդունվել է 2003 թվականին: Թեև օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է պաշտոնի նշանակման պայմանները և հղում է կատարում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքին, սակայն օրենքի իրավահամեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ պրոբացիայի ծառայությունը համարվում է պետական ծառայության ինքնուրույն տեսակ[3]:

Մոլդովայի «Պրոբացիայի մասին» օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է, որ պրոբացիայի ծառայությունը պետական ծառայության ինքնուրույն տեսակ է[4]:

Ուկրաինայի «Պրոբացիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածը պրոբացիայի ծառայողներին հավասարեցնում է քրեակատարողական ծառայողներին[5]:

Էստոնիայում և Չեխիայում պրոբացիայի ծառայությունը գործում է դատական իշխանության ներսում և պրոբացիայի ծառայողները համարվում են դատական ծառայողներ[6]:

---

[2] Տե՛ս, Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states "on the Council of Europe Probation Rules" https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cfbc7 (12.08.2022թ.-ի դրությամբ):

[3] Տե՛ս https://likumi.lv/ta/id/82551-valsts-probacijas-dienesta-likums (12.08.2022թ.-ի դրությամբ)

[4] https://www.legis.md/cautare/getResults?doc_id=110176&lang=ro (12.08.2022թ.-ի դրությամբ)

[5] Տե՛ս https://kodeksy.com.ua/ka/o_probatsii/19.htm (12.08.2022թ.-ի դրությամբ):

[6] European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu. https://www.cep-probation.org/wp-content/uploads/2018/10/20081_Chapter_1_Comparative_overview.pdf (12.08.2022թ.-ի դրությամբ)

Հավելենք, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է գործեն այնպես, որպեսզի դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմի կարգավիճակն ու աշխատանքն արժանանան արդարադատության համակարգի այլ մարմինների և քաղաքացիական հասարակության հարգանքին: Իրավասու մարմինները պետք է փորձեն դյուրացնել այդ նպատակի իրագործումը՝ ապահովելով համապատասխան ռեսուրսների նպատակաուղղված ընտրությունը և ներգրավումը, անձնակազմի բավարար վարձատրությունը և արդյունավետ կառավարումը: Պրոբացիայի ծառայողների վարձատրությունը, վերջիններիս վճարվող նպաստները և աշխատանքի պայմանները պետք է արտացոլեն նրանց մասնագիտության հեղինակությունը և համապատասխանեն նրանց աշխատանքի բարդ բնույթին:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի դրույթների, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության, միջազգային կառույցների առաջարկությունների իրագործման, ինչպես նաև ոլորտում վերհանված խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Անդրադառնալով ոլորտում վերհանված խնդիրների վերլուծությանը՝ նշենք, որ ներկայումս Արդարադատության նախարարության ենթակա մարմիններ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը և Քրեակատարողական ծառայությունը ունեն հատուկ կարգավիճակ: Երկու ծառայություններն էլ հանրային ծառայության առանձին տեսակներ են: Թեև քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների միջև առկա են մի շարք նմանություններ, այնուամենայնիվ, պրոբացիայի ծառայությունը, հանդիսանալով քաղաքացիական ծառայություն, չի օգտվում այն սոցիալական երաշխիքներից, որոնք սահմանվել են ոչ միայն քրեակատարողական, այլև հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների համար:

Համաձայն գործող օրենսդրական կարգավորումների՝ պրոբացիայի ծառայողը քաղաքացիական ծառայող է: Նշվածի համատեքստում հարկ է նկատի ունենալ Պրոբացիայի ծառայությանը օրենքով **վերապահված լիազորությունների շրջանակը**:

Մասնավորապես, ըստ Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պրոբացիայի ծառայությունը, ի թիվս այլ գործառույթների, ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների

կատարումը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը, վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ: Իսկ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 13-րդ հոդվածում պատիժը կատարող մարմինների շարքում նշվում է նաև Պրոբացիայի ծառայությունը, և սահմանվում է, որ տուգանքի, հանրային աշխատանքների, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, ազատության սահմանափակման կատարումը, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու կատարումն ապահովում է Պրոբացիայի ծառայությունը: Հարկ է նշել, որ Պրոբացիայի ծառայությունը, հանդիսանալով պատիժ կատարող մարմին, կատարում է դատապարտյալի հետ բազմաթիվ աշխատանքներ, այդ թվում՝ պատժի կատարում, վերահսկողություն, վերասոցիալականացման, վերականգնողական և վերաինտեգրման աշխատանքներ, որոնց շրջանակում պրոբացիայի ծառայողները կապ են հաստատում շահառուների հետ, հանդիպում նրանց և նրանց հարազատներին, հանցագործությունից տուժած անձանց հետ, բազմաթիվ այցելություններ են կատարում շահառուների բնակության, ուսման և աշխատանքի վայրեր, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներ, պարզում նրանց սոցիալական դրությունը, միջավայրը և շփումները, իրականացնում են կարիքների և ռիսկերի գնահատում, յուրաքանչյուր անձի անձնական և սոցիալական առանձնահատկությունները հաշվի առնելով կազմում են վերահսկողության և վերասոցիալականացման պլաններ, կազմակերպում և իրականացնում կրթական, իրավական, հոգեբանական, սոցիալական, մշակութային, կրոնական, մարզական միջոցառումներ:

Բացի այդ ծառայողները կազմում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցներ և դրանք ներկայացնում դատարանում: Զեկույց կազմելու ընթացքում այցելում են քրեակատարողական հիմնարկներ և առանձնազրույցներ ունենում դատապարտյալների հետ, այցելում են հանցագործությունից տուժած անցանց կամ նրանց իրավահաջորդներին և ճշտում նրանց դիրքորոշումը դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ, տարբեր տեղեկություններ են հավաքում դատապարտյալի սոցիալական միջավայրի և նրա վարքագծի վերաբերյալ՝ համայնքից, պետական մարմիններից, հարևաններից, աշխատանքի և ուսման վայրերից և այլն: Պրոբացիայի ծառայողները ազատազրկման հետ չկապված պատիժների կրման, ինչպես նաև

վերահսկողության կատարման կարգի ու պայմանների խախտման դեպքում ազատազրկման միջնորդություններ են ներկայացնում դատարան և դրանք պաշտպանում դատարանում:

Հարկ է նշել, որ 2023 թվականից սկսած պրոբացիայի ծառայողների գործառույթներին ավելանացել են նաև իրավաբանական անձանց նկատմամբ դատարանի կողմից կիրառված քրեաիրավական ներգործության միջոցների ապահովումը, պրոբացիայի շահառուների 24 ժամյա էլեկտրոնային հսկողությանը կազմակերպումը և ապահովումը: Սկզբնական շրջանում նախատեսվում է էլեկտրոնային հսկողություն իրականացնել 500 շահառուի նկատմամբ: Ընդհանուր առմամբ 2023 թվականին նախատեսվում է վարույթների 30% աճ:

Այս առումով հատկանշական է, որ նախկին օրենսդրական կարգավորումների համաձայն՝ Պրոբացիայի ծառայությունը ապահովում էր **թվով 3 պատժի կատարում**՝ տուգանք, հանրային աշխատանք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում և **իրականացնում էր վերահսկողություն** պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող անձանց, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց, հղի կանանց, մինչև երեք տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատված կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ: Ներկայումս քրեական ոլորտը կարգավորող նոր օրենսդրությամբ Պրոբացիայի ծառայության գործառույթները գրեթե **կրկնապատկվել են**: Մասնավորապես, ավելացել են Պրոբացիայի ծառայության կողմից կատարման ենթակա նոր պատիժներ՝ օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը, ազատության սահմանափակումը, իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման ապահովումը, այլընտրանքային խափանման միջոցներ՝ տնային կալանք և վարչական հսկողություն, անվտանգության միջոցներ՝ որոշակի վայրեր այցելելու արգելքը կիրառելու և հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը կատարելու ապահովումը: Միաժամանակ Պրոբացիայի ծառայության բացառիկ գործառութային առանձնահատկությունների վերաբերյալ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պրոբացիայի ծառայությունը հանդիսանում է միակ պետական ծառայությունը, որը կատարում է ազատազրկման հետ չկապված քրեական պատիժներ, վերահսկողություն է իրականացնում պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատժի կրումը հետաձգված, պատիժը պայմանականորեն չկիրառված դատապարտյալների նկատմամբ, կատարում է դատարանի կողմից նշանակված անվտանգության միջոցներ, կատարում է տնային կալանք և վարչական հսկողություն բխափանման միջոցները: Հատկանշական է, որ տնային կալանք խափանման միջոցի կատարման կարգը և ժամկետները Քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն նույնացվել են կալանքի կարգին և ժամկետներին: Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխել մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը.

2) այցելել որոշման մեջ նշված որոշակի վայրեր.

3) հաղորդակցվել որոշակի անձանց հետ.

4) օրվա որոշակի ժամերի լքել իր բնակության տարածքը, սակայն ոչ ավելի, քան 12 ժամը:

Վերոհիշյալ սահմանափակումների վերբերյալ հսկողությունը նույնպես իրականացնում է Պրոբացիայի ծառայությունը:

Հաճախ դատական ակտերը Ծառայություն են ստացվում ոչ աշխատանքային /տոնական կամ հիշատակի/ օրերին կամ ժամերին, ինչպես նաև լինում են դեպքեր, երբ դատական ակտով տնային կալանքի ժամկետներ չեն նշվում կամ ժամկետի սկիզբը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ:

Համաձայն «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ պրոբացիայի ծառայողը՝ պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձ է: Պրոբացիայի ծառայողի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի պրոբացիայի ծառայողի համար աշխատանքային օրեր են համարվում երկուշաբթիից ուրբաթ օրերը /բացառությամբ տոնական և հիշատակի օրերը/, իսկ աշխատանքային ժամ՝ 9:00-18:00: Պրոբացիայի ծառայությունը չունի նաև շուրջօրյա հերթափոխային ծառայություն: Նշվածով պայմանավորված առաջանում են խնդիրներ, և դժվարանում է պրոբացիայի ծառայողի կողմից օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը ոչ աշխատանքային ժամերին և օրերին: Պրոբացիայի ծառայողները ստիպված են գիշերային ժամերին և/կամ ոչ աշխատանքային օրերին այցելել շահառուի բնակության հասցե, վերցնել հաշվառման, տեղադրել էլեկտրոնային հսկողության սարքը և իրականացնել օրենքով սահմանված այլ գործառույթներ (փաստացի նշված ժամին օրենքով սահմանված կարգով իրավունք չունենալով իրականացնելու իր լիազորությունները):

Բացի այդ պրոբացիայի ծառայությունը կազմում է և ներկայացնում է պատիժ կրող դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցներ և դրանք ներկայացնում և պաշտպանում դատարանում: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ դատապարտյալների կողմից պատիժների և վերահսկողության պայմանների խախտման դեպքում պրոբացիայի ծառայությունը միջնորդություն է ներկայացնում դատարան պատիժը ավելի խիստ պատժով փոխարինելու վերաբերյալ: Պրոբացիայի մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով և դրանց թվում են հետևյալ նպատակները

1) քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով.

2) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը.

3) հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.

4) պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելը.

5) քրեական արդարադատության իրականացման աջակցությունը:

Թվարկված նպատակների բովանդակությունից ակնհայտ է, որ դրանք բնորոշ են պետական ծառայության առանձին կարգավիճակ ունեցող մարմնին:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ քաղաքացիական ծառայության հմակարգում գտնվող որևէ այլ ծառայություն նշված գործառույթները չի իրականացնում, գտնում ենք, որ Պրոբացիայի ծառայության գործառույթները բացառիկ են, և նման են քրեակատարաղոկան ծառայության գործառույթներին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվում են ստորև նշված հիմնական գործառույթները.

1. Պատիժների կատարում՝

1.1. տուգանք,

1.2. հանրային աշխատանք,

1.3. որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում,

1. 4. օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարում,

1.5. ազատության սահմանափակում,

1.6. իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման ապահովում:

2. Վերահսկողություն՝

2. 1. պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով անձանց նկատմամբ,

2.2. պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ,

2.3. հղի կանանց և մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգված անձանց նկատմամբ,

2.4. հիվանդության հետևանքով պատժից ազատված կամ պատժից հետաձգված անձանց նկատմամբ,

2.5. արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատված անձանց նկատմամբ:

3.Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացում ստորև նշված ոլորտներում՝

3.1. Կրթական,

3.2. մասնագիտական որակավորման,

3.3. իրավական,

3.4. հոգեբանական,

3.5. սոցիալական,

3.6. մշակութային,

3.7. կրոնական,

3.8. մարզական:

4. Խափանման միջոցների կատարման ապահովում՝

4.1. տնային կալանք,

4.2. վարչական հսկողություն:

5. Անվտանգության միջոցների կատարման ապահովում՝

5.1. որոշակի վայրեր այցելելու արգելքի կիրառման ապահովում,

5.2. հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը կատարելու ապահովում:

6. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցների կազմում և դատարանում ներկայացում:

Վերոգրյալից կարող ենք եզրակացնել Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող գործառույթների բազմազանությունն ու կարևորությունը՝ հատկապես նոր քրեաիրավական կարգավորումների սահմանման պայմաններում: Այսպիսով, Պրոբացիայի ծառայությունը, **հանդիսանալով պատիժ կատարող մարմին,** իրականացնում է դատապարտյալի հետ բազմաթիվ աշխատանքներ, այդ թվում՝ պատժի կատարում, վերահսկողություն, վերասոցիալականացման, վերականգնողական և վերաինտեգրման աշխատանքներ, կազմում

պատժից պայմանական վաղաժամկետ ազատման զեկույցներ: **Ընդ որում, թեև քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների միջև առկա են մի շարք նմանություններ,** այնուամենայնիվ, պրոբացիայի ծառայության աշխատակիցները հանդիսանալով քաղաքացիական ծառայողներ, չեն օգտվում այն սոցիալական երաշխիքներից, որոնք սահմանվել են ոչ միայն քրեակատարողական, այլ նաև հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների համար: Այս առումով նշենք նաև, որ Պրոբացիայի մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասով տարբերակված մոտեցում է դրսևորվել մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումում աշխատած և Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Պրոբացիայի ծառայություն ընդունված քաղաքացիական ծառայողների միջև: Մասնավորապես, Օրենքով սահմանվել է, որ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում աշխատող պետական ծառայողին պրոբացիայի ծառայող համարելիս պահպանվում է մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը նրա հիմնական աշխատավարձի գործող չափը, եթե այն ավելի բարձր է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որպես քաղաքացիական ծառայող նրա համար որոշվող հիմնական աշխատավարձի չափից: Նման իրավակարգավորման գործողության դեպքում խնդրահարույց է միևնույն աշխատաքային պարտականությունները կատարող ծառայողների կողմից տարբեր չափով վարձատրվելու հանգամանքը: Միաժամանակ, նկատի ունենալով նաև մինչև Օրենքի ընդունումը այլընտրանքային պատիժների կատարման բաժնում աշխատող պետական ծառայողների ունեցած վարձատրության չափի ողջամիտ ակնկալիքը (legitimate expectation), հարցի լուծումը պետք է դիտարկել հենց սոցիալական երաշխիքների բարձրացման տեսանյունից՝ հիմք ընդունելով ներկայումս պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրները:

Անդրադառնալով Պրոբացիայի ծառայողների **սոցիալական երաշխիքների ապահովման խնդրին**՝ կարևոր է նաև ներկայացնել գործնականում ծագած մի շարք խնդիրներ:

Այսպես, ներկայումս յուրաքանչյուր պրոբացիայի ծառայողի վարույթում առկա է 50-100 անձնական գործ: Պրոբացիայի ծառայողին վճարվող աշխատավարձի չափը կազմում է 80.000 – 120.000 ՀՀ դրամ: Մինչդեռ, ծառայության ընթացքում յուրաքանչյուր ծառայող ամեն ամիս մասնակցում է առնվազն 10-20 դատական նիստերի, յուրաքանչյուր գործով այցելում է տարբեր քրեակատարողական հիմնարկներ, շահառուի բնակության հասցե, տուժողների կամ նրանց իրավահաջորդների բնակության հասցե: Հանրային աշխատանքների

կատարման վերահսկողություն իրականացնելու նպատակով Պրոբացիայի ծառայողը առնվազն ամիսը մեկ անգամ այցելում է պրոբացիայի շահառուի աշխատավայր՝ պրոբացիայի շահառուի կողմից պատիժը կրելու մասին տեղեկատվություն կամ պարզաբանումներ ստանալու համար: Ընդ որում, համաձայն գործող օրենսդրական կարգավորումների և ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի N 336-Լ հրամանով սահմանված կարգի, պրոբացիայի ծառայողները մասնակցում են մի շարք հանդիպումների դատապարտյալի ուսման կամ աշխատանքի վայրի վարչակազմի հետ, ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, հարևանների, ինչպես նաև տուժող կողմի (կողմերի) հետ, այցեր կատարում համապատասխան քրեակատարողական հիմնարկ դատապարտյալի անձնական գործի ուսումնասիրման և դատապարտյալի հետ զրույց ունենալու համար, ինչպես նաև մասնակցում զեկույցի հետ կապված դատական նիստերին:

Վերոնշյալ գործառույթները իրականացնելու ընթացքում տարածքային մարմնից համապատասխան քրեակատարողական հիմնարկ, դատարան, շահառուի բնակության և աշխատանքի, հանրային աշխատանքի կատարման և այլ վայրեր այցելություններ կատարելու համար պրոբացիայի ծառայողը **իր միջոցների հաշվին կատարում է տրանսպորտային ծախսեր:** Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ Պրոբացիայի ծառայության տարածքային մարմինների հեռավորությունը, օրինակ՝ համապատասխան քրեակատարողական հիմնարկներից: Այսպես, Երևան քաղաքային մարմնի (նստավայրը՝ ք. Երևան) ծառայողները զեկույցներ կազմելու նպատակով այցելում են ՔԿՀ և վերադառնում են աշխատանքի վայր՝ «Նուբարաշեն» ՔԿՀ՝ 20 կմ, «Վարդաշեն» ՔԿՀ՝ 24 կմ և «Երևան-Կենտրոն» ՔԿՀ՝ 10 կմ: Յուրաքանչյուր զեկույցի կազմման համար Երևան քաղաքային մարմնի պրոբացիայի ծառայողը համապատասխան քրեակատարողական հիմնարկ հասնելու և վերադառնալու համար ծախսում է մոտ 2.000-3.000 ՀՀ դրամ: Արմավիրի մարզային մարմնի (նստավայրը՝ ք. Էջմիածին, ք. Արմավիր) ծառայողները զեկույցներ կազմելու նպատակով այցելում են և վերադառնում «Արմավիր» ՔԿՀ՝ 36-40 կմ: Յուրաքանչյուր զեկույցի կազմման համար Արմավիրի մարզային մարմնի պրոբացիայի ծառայողը համապատասխան քրեակատարողական հիմնարկ հասնելու և վերադառնալու համար ծախսում է մոտ 3.000 - 4.000 ՀՀ դրամ: Լոռու մարզային մարմնի (նստավայրեր՝ ք. Վանաձոր, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր, ք. Ալավերդի) ծառայողները զեկույցներ կազմելու նպատակով այցելում են և վերադառնում «Վանաձոր» ՔԿՀ՝ Վանաձորից՝ 14 կմ, Սպիտակից՝ 30 կմ, Ալավերդիից՝ 94 կմ, Ստեփանավանից՝ 70 կմ, Տաշիրից՝ 100 կմ: Յուրաքանչյուր զեկույցի կազմման համար Լոռու մարզային մարմնի պրոբացիայի ծառայողը

համապատասխան քրեակատարողական հիմնարկ հասնելու համար ծախսում է մոտ 4.000-8.000 ՀՀ դրամ: Սյունիքի մարզային մարմնի (նստավայրեր՝ ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Կապան,) ծառայողները զեկույցներ կազմելու նպատակով այցելում են և վերադառնում Գորիս քաղաքից «Գորիս» ՔԿՀ 10 կմ, Կապան քաղաքից «Գորիս» ՔԿՀ՝ 140կմ, Սիսիան քաղաքից՝ 60 կմ: Յուրաքանչյուր զեկույցի կազմման համար Սյունիքի մարզային մարմնի պրոբացիայի ծառայողը համապատասխան քրեակատարողական հիմնարկ հասնելու համար ծախսում է մոտ 2.000-10.000 ՀՀ դրամ: Նշենք, որ մյուս մարզային մարմիններում ևս առկա է նույն խնդիրը:

Միաժամանակ, հայտնում ենք, որ Պրոբացիայի ծառայությունը ոչ բոլոր քաղաքներում ունի նստավայրեր: Արդյունքում, դատապարտյալի ուսման կամ աշխատանքի վայրի վարչակազմի, ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, հարևանների, ինչպես նաև տուժող կողմի (կողմերի) հետ հանդիպումներ իրականացնելու, զեկույցի հետ կապված դատական նիստերին մասնակցելու նպատակով երբեմն համապատասխան վայր հասնելու և վերադառնալու համար պրոբացիայի ծառայողը անցնում է 40-130կմ հեռավորություն:

Բացի այդ, պրոբացիայի շահառուների կողմից հանրային աշխատանքների կատարումը ստուգելու նպատակով ծառայողները այցելում են հանրային աշխատանքների կատարման վայր, շահառուներին հաշվառման վերցնելու նպատակով այցելում են քրեակատարողական հիմնարկներ, պրոբացիայի ծառայության մարզային մարմիններում շահառուների անձնական գործերի վարման օրինականության ստուգման նպատակով մեկնում են մարզեր:

Միաժամանակ, պրոբացիայի շահառուի կողմից ծանուցման նշված օրը Պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել շահառուի բնակության կամ աշխատանքի վայր, որը հաճախ գտնվում է գյուղական բնակավայրերում և կարող է գտնվել մինչև 100 կմ հեռավորության վրա: Բացի այդ, վերահսկողության պլանի համաձայն՝ Պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել շահառուի բնակության վայր, շփվել ընտանիքի անդամների հետ: Նույն գործառույթները առկա են նաև անչափահաս շահառուների դեպքում:

Պրոբացիայի ծառայողները նաև բազմաթիվ այցեր են կատարում դատարաններ՝ ներկայացված միջնորդությունների քննարկման նպատակով (շուրջ 900):

Հարկ է նշել նաև որ 2023 թվականի հունվարի 1-ից պրոբացիայի ծառայությունն իրականացնում է նաև էլեկտրոնային հսկողություն, մասնավորապես՝ տնային կալանք, վարչական հսկողություն խափանման միջոցները, ազատության սահմանափակում պատիժը, ինչպես նաև որոշակի վայրեր այցելելու արգելք անվտանգության միջոցը կատարելու նպատակով, հետևաբար պրոբացիայի ծառայողների տեղաշարժը կրկնապատկվելու է,

մասնավորապես՝ տնային կալանքի սարքավորումները տեղադրելու համար սարքը պետք է տեղափոխվի տնային կալանքի վայր և տեղադրվի այդ վայրում, էլեկտրոնային հսկողության ցանկացած խախտման դեպքում օրվա յուրաքանչյուր ժամին /24 ժամ/ պրոբացիայի ծառայողը պետք է մեկնի խախտում արձանագրված վայրը, նշված վայրերը որոշ մարզերում կարող է գերազանցել 100 կմ:

Բացի այդ էլեկտրոնային հսկողությունն ապահովելու համար պրոբացիայի ծառայությունում և մարզային մարմիններում պետք է ներդրվի 24 ժամյա հերթապահություն:

Արդյունքում, պրոբացիայի ծառայողները նշված գործառույթները իրականացնում են սեփական միջոցների հաշվին: Վերոգրյալի համատեքստում կարևոր է նշել, որ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված գործուղման ընթացակարգը ոչ միշտ է կիրառելի պրոբացիայի ծառայողների տրանսպորտային և այլ ծախսերի փոխհատուցման հարաբերությունների վրա:

Վերոնշյալ խնդիրների վերլուծության արդյունքում՝ կարող ենք փաստել Պրոբացիայի ծառայողների նկատմամբ սոցիալական երաշխիքների սահմանման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Նշված խնդրի լուծման նպատակով «**Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում** լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով առաջարկվել են նոր իրավակարգավորումներ, որոնց բովանդակությանն առավել մանրամասն կանդրադառնանք ստորև:

Հարկ է նկատել, որ ծառայության անցնելու գրավչությունն ու շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով պրոբացիայի ծառայողների համար հավելավճար սահմանելու, հավելավճարի հաշվարկումն ծառայողների ատեստավորմամբ պայմանավորելու և, դրանով իսկ, նրանց սոցիալական ապահովության անհրաժեշտ մակարդակի սահմանումը կնպաստի պրոբացիայի ծառայությունն ավելի գրավիչ դարձնելուն՝ այդպիսով երաշխավորելով ինչպես թափուր հաստիքների համալրումը, այնպես էլ որակյալ կադրերի ներգրավումը: Ծառայության անցնելու և ծառայությունը շարունակելու համար սոցիալական երաշխիքներ և լրացուցիչ խթաններ նախատեսող կառուցակարգերի նախատեսումը անկյունաքարային նշանակություն ունի պրոբացիայի ծառայության՝ որպես հանրային ծառայության տեսակի պատշաճ կազմակերպման և ծառայության գրավչության բարձրացման գործում՝ հաշվի անելով նաև պրոբացիայի ծառայության գործառույթների շրջանակի ընդլայնումը, և հետևաբար՝ պրոբացիայի ծառայողների գործառույթներով պայմանավորված կատարվող աշխատանքի բնույթը և բարդությունը, դրա սոցիալական կարևորությունը:

Անդրադառնալով Պրոբացիայի ծառայության ֆինանսավորմանը, նշենք, որ Պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ այդ նպատակով նախատեսված միջոցներից: Միևնույն ժամանակ, ակնկալվում է 2023 թվականի բյուջետային ծախսերի մի մասը՝ անհրաժեշտ գումարի չափով, իրականացնել ԵՄ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում պետական բյուջե համալրված միջոցներից:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ օրենսդրական ակտերի նախագծերի ընդունումը պայմանավորված է Պրոբացիայի ծառայությունը որպես պետական ծառայության առանձին տեսակ սահմանելու և որպես հետևանք՝ Պրոբացիայի ծառայողների կարգավիճակի վերանայման ու վերջիններիս նկատմամբ սոցիալական երաշխիքների ընդլայնման անհրաժեշտությամբ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Պրոբացիայի ծառայության մասին», ««Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) փաթեթով առաջարկվում է վերանայել Պրոբացիայի ծառայության կարգավիճակը՝ ներառելով այն պետական առանձին ծառայությունների ցանկում, միաժամանակ սահմանելով ծառայության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ սոցիալ-իրավական երաշխիքներ:

2.1. «Պրոբացիայի ծառայության մասին» օրենքի նախագիծ (այսուհետ սույն ենթավերնագրում նաև՝ Օրենքի նախագիծ)

2.1.1. Պրոբացիայի ծառայության կարգավիճակը և կառուցվածքը: Օրենքի նախագծով առաջարկվել է Պրոբացիայի ծառայությունը սահմանել որպես պետական ծառայության առանձին տեսակ, իսկ Պրոբացիայի ծառայությունում ծառայողները կհամարվեն Պրոբացիայի ծառայողներ: Հարկ է նաև նկատել, որ, այնումաենայնիվ, Պրոբացիայի ծառայությունում նախատեսվում է պահպանել նաև քաղաքացիական ծառայության ինստիտուտը և որոշ

քաղաքացիական ծառայողների հաստիքներ, որոնց նկատմամբ կիրառելի կլինեն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի դրույթները: Բացի այդ, Օրենքի նախագծով նախատեսված են նաև տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների վերաբերյալ իրավակարգավորումներ, որոնց աշխատանքային հարաբերությունների նկատմամբ, ըստ Օրենքի նախագծի, կիրառելի է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը: Տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներին, ըստ Օրենքի նախագծի, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Պրոբացիայի ծառայության գլխավոր քարտուղարը:

Օրենքի նախագծով սահմանվում է Պրոբացիայի ծառայության **կառուցվածքը:** Մասնավորապես, Պրոբացիայի ծառայությունը կազմված է լինելու կենտրոնական մարմնից և տարածքային մարմիններից:

Պրոբացիայի ծառայությունը ունենալու է նաև գլխավոր քարտուղար, որի ենթակայությամբ էլ աշխատելու են քաղաքացիական ծառայողները և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցները:

Պրոբացիայի ծառայության կառավարումն իրականացնելու է արդարադատության նախարարը, իսկ անմիջական ղեկավարումը՝ Պրոբացիայի ծառայության պետը:

2.1.2. Նշանակումներ: Օրենքի նախագծի համաձայն՝ Պրոբացիայի ծառայության պետի և տեղակալների պաշտոնները լինելու են պետական վարչական պաշտոններ: Օրենքի նախագծով սահմանվում է, որ Պրոբացիայի ծառայության պետին նշանակում է վարչապետը՝ արդարադատության նախարարի առաջարկությամբ, իսկ տեղակալներին՝ արդարադատության նախարարը՝ Պրոբացիայի ծառայության պետի առաջարկությամբ: Ըստ Օրենքի նախագծի՝ պրոբացիայի ծառայողների պաշտոններում նշանակումները կատարում է պրոբացիայի ծառայության պետը: Պրոբացիայի ծառայության գլխավոր քարտուղարին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:

Օրենքի նախագծով նախատեսվում են նաև Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելու պայմանները, մասնավորապես՝ Պրոբացիայի ծառայության պետի, տեղակալների, ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերում նշանակվելու համար մասնագիտական աշխատանքային ստաժի և օրենքով նախատեսված այլ պահանջների վերաբերյալ:

Օրենքի նախագծով կարգավորվում է Պրոբացիայի ծառայության պաշտոնն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակման համար իրականացվող փորձաշրջանի և պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի վերաբերյալ դրույթները: Սահմանվում է, որ

Պրոբացիայի ծառայության պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքներով՝ բացառությամբ Պրոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների պաշտոնների: Մրցույթի անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը: Մրցույթին կարող են մասնակցել օրենքով սահմանված պահանջներին (հայերենի իմացություն, բարձրագույն կրթություն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, տարիքային շեմ, մասնագիտական պահանջներ և այլն) բավարարող քաղաքացիները:

2.1.3. Պրոբացիայի ծառայողների դասային աստիճանները: Ըստ Օրենքի նախագծի՝ Պրոբացիայի ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները՝

1) արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական.
2) արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական.
3) արդարադատության առաջին դասի խորհրդական.
4) արդարադատության երկրորդ դասի խորհրդական.
5) արդարադատության երրորդ դասի խորհրդական.
6) առաջին դասի խորհրդական.
7) երկրորդ դասի խորհրդական.
8) երրորդ դասի խորհրդական:

Ըստ Օրենքի նախագծի՝ բարձրագույն դասային աստիճանները շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի միջնորդությամբ: Բարձրագույն դասային աստիճանները շնորհվում են պրոբացիայի ծառայության պետին և նրա տեղակալներին:

2.1.4. Պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքները: Օրենքի նախագծով առաջարկվում է պրոբացիայի ծառայության գլխավոր, առաջատար կամ կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար սահմանել ատեստավորման համակարգ, որի արդյունքներով պայմանավորված պրոբացիայի ծառայողին կհաշվարկվի հավելավճար:

Գործընթացի շրջանակներում նախատեսվում է Կառավարության որոշմամբ սահմանել ատեստավորման կարգ, որի համաձայն կներդրվի պրոբացիայի ծառայողների ատեստավորման համակարգը, կսահմանվեն համապատասխան հավելավճարների չափերը, վճարման և հաշվարկման կարգերը: Նշենք, որ հավելավճարի հաշվարկման նպատակով ատեստավորումն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ համապատասխան պաշտոն զբաղեցնող պրոբացիայի ծառայողողների դեպքում ատեստավորումը առաջարկվում է սահմանել կամավոր հիմունքով, իսկ օրենքով սահմանված կարգով պրոբացիայի ծառայության պաշտոնն առաջին անգամ (առաջին անգամ պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվողները և այն ծառայողները, ովքեր կնշանակվեն զբաղեցրած պաշտոնի

խմբից բարձր պաշտոնի) զբաղեցնող ծառայողների համար՝ պաշտոնի նշանակվելու օրվանից հետո որոշակի ժամանակահատվածում՝ պարտադիր կարգով: Պրոբացիայի ծառայության համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց համար առաջին ատեստավորման կամավորության սկզբունքը նախատեսվել է այն տրամաբանությամբ, որ ծառայողը ինքը շահագրգռված լինի հավելավճարի տեսքով իր դրամական ապահովության բարձրացման համար և ատեստավորում անցնելու դիմում ներկայացնի:

Նշենք նաև, որ ատեստավորման արդյունքներով հավելավճար ստացող ծառայողները նույն պաշտոնում ենթակա են լինելու ատեստավորման երեք տարին մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերած պրոբացիայի ծառայողը կարող է կրկնակի ատեստավորում անցնելու համար դիմել տարեկան ոչ ավելի, քան երկու անգամ, որի արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

2.2. «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նախագծով սահմանված իրավակարգավորումները մեծապես պայմանավորված են Պրոբացիայի ծառայության մասին օրենքի ընդունման արդյունքում Պրոբացիայի ծառայությունը որպես պետական ծառայության առանձին տեսակ նախատեսելու հանգամանքով: Արդյունքում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ և լրացումներ նախատեսել ծառայության կարգավիճակի վերաբերյալ դրույթներ սահմանող իրավական նորմերում:

2.3. «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նախագծով Պրոբացիայի ծառայությունը սահմանվել է որպես պետական ծառայության առանձին տեսակ:

2.4. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ

Նախագծով առաջարկվում է մի շարք լրացումներ կատարել օրենքում, որոնց շնորհիվ կբարելավվեն պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքները, բացի այդ՝ օրենքում

կատարվող լրացումները հնարավորություն կտան միասնականացնել պրոբացիայի ծառայողներին և քրեակատարողական ծառայողներին տրամադրվող սոցիալական երաշխիքները: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է սահմանել պրոբացիայի ծառայողներին հավելավճար տալու հնարավորություն, ինչը պայմանավորվելու է ծառայողների ատեստավորման դրական արդյունքներով:

2.5. «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

Պրոբացիայի ծառայողներին և քրեակատարողական ծառայողներին տրամադրվող սոցիալական երաշխիքների միասնականացման նպատակով Նախագծով առաջարկվել է պրոբացիայի ծառայողների համար սահմանել զինվորական կենսաթոշակի իրավունք:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում, Կառավարության ծրագրին համապատասխան, ակնկալվում է բարեփոխել Պրոբացիայի ծառայության կարգավիճակը՝ այն դարձնելով պետական ծառայության առանձին տեսակ, բացառել տարբերակված մոտեցումը միևնույն կարգավիճակն ունեցող ենթակա պետական մարմինների միջև, ընդլայնել պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքները և ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ ծառայությունը մոտիվացված և պրոֆեսիոնալ կադրերի համար առավել գրավիչ դարձնելու համար:

4.Նախագծերի փաթեթի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագծերի փաթեթը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծերի փաթեթի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման պահանջներից: Մասնավորապես, նշված որոշման Հավելված 1-ում «Արդարադատության նախարարություն» վերտառությունը կրող ցանկի թիվ 15-րդ նպատակի («Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումների ռազմավարության

իրականացում») միջոցառումների թվում է պրոբացիայի ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կարգավիճակի վերանայմանը և պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքների ընդլայնմանը միտված օրենսդրական փոփոխությունների իրականացումը (15.1 ենթակետ):